Արձանագրություն N 5
ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Դիլիջան 11 հունվարի 2021թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կարապետյան
Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Հ. Մարկոսյան, Ա. Հովսեփյան
Հանձնաժողովի բացող անդամներ՝ Ռ.Քոչարյան , Ք.Խաչատրյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Է. Գրիգորյան

1. **Հանձնաժողովի նիստի օրակարգը**
(Ա. Կարապետյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու) մասին,
3. Մերժված հայտերի մասին,
4. Գնահատման մասին,
5. Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին,
6. Ներկայացված հիմնավորումների մասին,
7. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու) մասին
(Ա. Կարապետյան)

Ընդունել ի գիտություն, որ 2020թ.-ի դեկտեմբերի 17-ին ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/1 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից՝ Արման Սվազյան ԱՁ-ին ուղարկվել է պայմանագիր կնքելու առաջարկ և կնքվելիք պայմանագրի նախագիծ:

Մասնակցին տրվել է 10 աշխատանքային օր մինչև՝ 08.01.2021թ., ժամանակ որպեսզի ներկայացնի հաստատված պայմանագիրը: Սահմանված ժամկետում մասնակցի կողմից հաստատված պայմանագիրը չի ներկայացվել, ուստի հանձնաժողովը որոշեց համաձայն ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/1 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.20-րդ կետի մերժել Արման Սվազյան ԱՁ-ի կողմից ներկայացված հայտը և ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին՝ ՌԵԴԻ-ՍԹԵԴԻ ՍՊԸ-ին:

Մասնակցի կողմից առաջարկած պայմանագրի կատարման գինը հետևյալն է.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Յուրաքանչյուր մասնակցի հայտով ներկայացված գները ՀՀ դրամ			
		Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր	Նախահաշվային գին
1	**Սննդի պատրաստման ծառայություններ**				**199375000**
	ՌԵԴԻ-ՍԹԵԴԻ ՍՊԸ	196185000		196185000	

3. **Մերժված հայտերի մասին**
(Ա. Կարապետյան)

Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ մասի բ. պարբերությունը՝ <<**որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց>>,** գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել Արման Սվազյան ԱՁ -ի կողմից ներկայացված հայտը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

4.Գնահատման մասին

(Ա. Կարապետյան)

Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ հայտ ներկայացրած և բավարար գնահատված մասնակից:

Առաջարկված հայտի հիման վրա հանձնաժողովը որոշեց.

Հ/Հ	Մասնակիցը	Չափաբաժինը
	Ընտրված մասնակից ճանաչել՝	
1	ՌԵԴԻ-ՍԹԵԴԻ ՍՊԸ	1

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

5.Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին

(Ա. Կարապետյան)

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել տեղեկագրում և անգործության ժամկետ սահմանել ծանուցման օրվան հաջորդող օրվանից հաշված 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

6.Ներկայացված հիմնավորումների մասին

(Ա. Կարապետյան)

Էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ **հիմնավորումներ չեն ներկայացվել:**

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

7.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Կարապետյան)

ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել ընտրված մասնակիցների հետ պայմանագրեր կնքելու օրվան հաջորդող օրվանից հաշված հինգ օրվա ընթացքում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ա. Կարապետյան

անդամներ՝ Հ. Մարկոսյան

Ա. Հովսեփյան

Ռ.Քոչարյան

Ք.Խաչատրյան

Քարտուղար Է. Գրիգորյան